ԱՎԱՆԴՈՒՅԹ

Վաղը՝ հուլիսի 28-ին, Նինոծմինդայի շրջանի Գանձա գյուղում ավանդաբար կանցկացվի հայ մեծ քնարերգու Վահան Տերյանին նվիրված Պոեզիայի օրը: Ինչպես միշտ, այս անգամ էլ սպասվում են հյուրեր Թբիլիսիից, Երեւանից, Վրաստանի եւ Հայաստանի տարբեր շրջաններից:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ճանաչված վիրահայ արձակագիր Սուրեն Ավչյանի (1904-1985թթ.) «Գրական ակնարկներ» ձեռնարկում զետեղված «Ընձենավորն» ու Վահան Տերյանը» նյութը եւ մի հատված Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» պոեմի նախերգանքից՝ Վահան Տերյանի հայտնի թարգմանությամբ:



«ԸՆՁԵՆԱՎՈՐՆ» ՈՒ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԸ

Յուրաքանչյուր գեղարվեստական երկ, մանավանդ չափածո, մի այլ լեզվով թարգմանելու դեպքում, հարուցում է յուրահատուկ բարդություններ: Հաջող թարգմանության համար հույժ կարեւոր են մի շարք նախապայմաններ: Թարգմանիչը լավ պետք է տիրապետի ե՛ւ թարգմանվող երկի լեզվին, ե՛ւ այն լեզվին, որով թարգմանվում է տվյալ ստեղծագործությունը: Նա ինքն էլ պետք է ստեղծագործող լինի, իսկ չափածոյի թարգմանությունը ձեռնարկելիս՝ անպայման բանաստեղծ: Թարգմանիչը պետք է հավանի եւ սիրի թարգմանվող գործը, պետք է թափանցի նրա ներքնաշխարհը, իմանա երկի բուն իմաստը, ոգին, բանաստեղծական հնարանքներն ու գաղտնիքները, գեղարվեստական նրբերանգները, հեղինակի նպատակադրումն ու աշխարհայացքը, գրելաձեւը, ոճը, տեխնիկան:

Այդ իսկ տեսակետից մի առանձին եւ խոշոր բարդություն է ներկայացնում վրաց գրականության հանճար՝ Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը», որն իրավամբ համարվում է համաշխարհային գրականության գոհարներից մեկը:

Ինչպես ասացինք, «Ընձենավորի» հայերեն թարգմանության նախապատիվը, անշուշտ, վերապահվում է Ստ.Բաստամյանին, պոեմի ամբողջական թարգմանության համար երախտապարտ ենք պրոֆ. Գեւորգ Ասատուրին, իսկ պոեմի նախերգանքի մի հատվածի բարձրորակ թարգմանության համար՝ մեր տաղանդավոր բանաստեղծ Վահան Տերյանին, որի թարգմանության վրա էլ ուզում ենք կանգ առնել: 1913 թվականին, դեռեւս Պետերբուրգի համալսարանի արեւելյան լեզուների ֆակուլտետի ուսանող, բայց արդեն անուն հանած բանաստեղծ Վահան Տերյանը հետաքրքրվում է «Ընձենավորով» եւ մտածում է թարգմանել այն հայերեն: Սակայն Տերյանը թեթեւ չի մոտենում գործին, նկատի է ունենում այդ խոշոր պոեմի բոլոր բարդություններն ու դժվարությունները:

Տերյանն իր դասախոս եւ մտերիմ բարեկամ, ակադեմիկոս Նիկ.Մառի ղեկավարությամբ սկսում է հիմնավորապես ուսումնասիրել վրաց լեզուն, քերականությունն ու գրականությունը:

Երկար ու համառ աշխատանքից հետո նա կարողանում է անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերել այդ բնագավառում եւ ապա 1914-1917 թվականներին թարգմանում է «Ընձենավորի» նախերգանքի սկզբի մասը:

Տերյանն այնքան մեծ պատասխանատվություն է զգացել իր ստանձնած գործի նկատմամբ, որ երեք-չորս տարվա ընթացքում ընդամենը միայն տասներկու տուն կամ քառասունութ տող է թարգմանել, այն էլ բազմաթիվ տարբերակներով: Այդ տասներկու քառյակից էլ տպագրության համար պատրաստել է միայն տասը, իսկ վերջին երկուսը թողել է սեւագիր վիճակում: Սակայն այդ տասը տունն էլ իր կենդանության օրոք տպագրության չի հանձնել, գուցե եւ հետագայում վերստին անդրադառնալու եւ վերամշակելու նպատակով:

Ահա թե ինչպիսի ակնածանքով է մոտեցել Տերյանը Ռուսթավելուն: Տերյանի թարգմանությունն առաջին անգամ տպագրվեց բանաստեղծի մահից երկու տարի հետո, այն է՝ 1922 թվականին, «Նորք» ամսագրում Պողոս Մակինցյանի ծանոթագրություններով:

Պ.Մակինցյանը հրապարակեց ոչ միայն Տերյանի ձեռքով արդեն տպագրության համար պատրաստ տասը, այլեւ եղած ամբողջ թարգմանությունը, այսինքն տասներկու տունը, վերջին երկու քառյակը հանելով Տերյանի սեւագրություններից:

Երբ ուշի-ուշով կարդում ենք ամբողջ թարգմանությունը, իսկույն զգացվում է, որ Տերյանն իրավացի էր վերջին երկու տան նկատմամբ, որոնք մեծ հաջողությամբ են կատարված, բայց բովանդակության ադեկվատի տեսակետից դեռեւս մշակման կարիք են զգում, իսկ նախորդ տասը տունը թարգմանված է չգերազանցված վարպետությամբ:

Տերյանը նոր էր վրացերեն սովորել, սակայն, նա խորացել, ըմբռնել էր վրացական լեզվի այնպիսի նրբություններն ու յուրահատկությունները, որոնք չեն նկատվել կամ չեն հասկացվել մյուս հայ թարգմանիչների կողմից:

ՍՈՒՐԵՆ ԱՎՉՅԱՆ
«Գրական ակնարկներ»

Թարգմանությունը՝
ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ԸՆՁԵՆԱՎՈՐ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Նա, որ ուժով ամենազոր հաստեց երկնի կամարն անհուն,
Շնչեց վերուստ եւ տվեց շունչ ամեն շնչի տիեզերքում,
Պարգեւեց մեզ հողն ու տերն ենք անեզրության այս բազմագույն,
Նա է կարգում երկրում արքա ի պատկեր յուր եւ յուր հանգույն:

Տերոդ միակ, որ կերտեցիր կերպով հաստատ ամեն մարմին,
Տո՛ւր զորություն, լե՛ր օգնական, որ տապալեմ սատանային,
Տուր խենթություն սիրահարի, հուր-սեր անշեջ՝ մինչեւ շիրիմ,
Տուր թողություն այն աշխարհում անթվելի իմ մեղքերին:

Առյուծին է վայել վահան, նիզակ ու սուր. ահա արքադ,
Թամար-արեւ արքայուհի, ում այտն է լալ, ում վարան ագաթ.
Կընհանդգնե՞մ արդյոք գովել քեզ իմ երգով, արեւի հատ,
Քեզ, ում նայողն, արդարապես, վայելում է շաքար ու կաթ:

Երգենք Թամար արքայուհուն, լալով արյուն-արցունք առատ,
Նրան ծոնած երգըս՝ ընտիր եւ ինձ թանաք լճերը սաթ,
Ու գրիչ ինձ՝ դողդոջն եղեգ. երգըս որպես սուրսայր մի խայթ
Թող լսողի սիրտը մեխվի, ճեղքե որպես տեգ մի պողպատ:

Պատվիրեց, որ գովեմ իրան երգով անուշ ու ոլորուն,
Իր հոնքն աղեղ, թարթիչը նետ, սաթ-վարսն ու լալն իր շուրթերում,
Ատամնաշարն իր գեղանի, բյուրեղներից հյուսված սիրուն.
Չէ՞ որ արծիճ զնդանին էլ մուրճը կարծր քար է փշրում:

Արդ պետք է ինձ երգիս համար սիրտ եւ լեզու, արվեստ ճարտար.
Թող ուժ տա ինձ, նա՛ թող օգնե, իր ձեռքին է միտք ու հանճար.
Այնժամ կօգնենք Տարիելին: Հիշելու ենք երեք պայծառ
Հսկա-հերոս միմյանց եղբայր, որպես գերի իրար խոնարհ...

Ում աչքերը չեն ցամաքում լալով ցավից դառն ու անճար,
Եկե՛ք, ում որ բախտ է ընկել Տարիելի բախտը դժվար.
Կընստեմ հեգ Ռուսթավելիս, կերգեմ խոցված ես չարաչար
Եվ ինչ որ ցարդ զրույց էր պարզ, պիտի դառնա մարգարտի շար:

Սիրահարը պիտի լինի արեւի պես չքնաղ ու վառ,
Առատաձեռն եւ ունեւոր, ազատ դյուցազն ու զորավար,
Կռվում հաղթող, երկարամիտ, մտքով հարուստ, լեզվով ճարտար.
Ում լիովին չի տված այս - չի կարող լինել սիրահար:

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Խորագիրը վարում է «Վրաստան» թերթի իրավական հարցերի փորձագետ ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻՆ:

Ընտանեկան հարաբերությունները բարդ են, դրանք կախված են մարդու ներքնաշխարհից, անձնական զգացմունքներից, սեռական կյանքից եւ այլն: Ընտանիքի անդամների միջեւ առկա հարաբերությունները միայն համատեղ, միասին ապրող մարդկանց հարաբերություն չէ, դրա անդամները միմյանց հետ առնչվում են ոչ միայն կենցաղային հիմնախնդիրներով ու հարցերով, այլեւ այդ հարաբերությունները յուրաքանչյուրի համար ներկայացնում են որոշակի իրավաբանական արդյունքներ, ինչը, բնականաբար, պահանջում է իրավական կարգավորում:

Ո՞րն է ընտանիքի կազմավորման հիմքը: Պարտադի՞ր է, արդյոք, պետական մարմնում ամուսնության ձեւակերպումը եւ, եթե պարտադիր է, ապա երիտասարդներին քանի տարեկանից է թույլատրվում ամուսնանալ: Գոյություն ունի՞ արդյոք, ամուսնական տարիքի նվազեցման օրինական հիմնավորում: Ամուսինների միջեւ ամուսնությունը հանգեցնո՞ւմ է, արդյոք, օրինական իրավասությունների: Ի՞նչը կարելի է համարել ամուսնության խանգարիչ հանգամանք: Ահա այն հիմնական հարցերը, որոնք վերաբերում են ընտանիք ստեղծելուն եւ, որոնք առանձնակի են հետաքրքրում թերթի ընթերցողներին:

Ամուսնությունը տղամարդու եւ կնոջ կամավոր միությունն է, որի նպատակն է ընտանիքի կազմավորումը: Ամուսնությունն ընտանիքի կազմավորման գլխավոր, թեպետ, ոչ միակ հիմքն է: Ընտանիքը հնարավոր է՝ կազմավորվի չամուսնացած կնոջ կողմից երեխա ծնելիս, երեխային որդեգրելիս եւ օրենքով նախատեսված իրավաբանական այլ փաստերի առկայության դեպքում:

Դեռեւս 1944 թվականի հուլիսի 8-ից գործող օրենսդրության համաձայն, Վրաստանի քաղաքացիների օրինական իրավասությունները ձեւակերպվում էին պետական համապատասխան մարմնում ամուսնության գրանցմամբ: Ներկա դրությամբ նման մարմինը Վրաստանի արդարադատության նախարարության կառավարման ոլորտի հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ քաղաքացիական ռեեստրի գործակալության տարածքային ծառայությունն է:

Ակնհայտ է, որ ամուսնությունը պետք է հիմնված լինի փոխադարձ սիրո, հարգանքի ու պատասխանատվության այն մեծ զգացումի վրա, ինչը նախատեսում է ընտանիքի կազմավորումը:

Առանց ամուսնության գրանցման, թեկուզ տարիներ շարունակ, որպես ընտանիք, ապրող ամուսինների միջեւ օրինական իրավասություններ չեն առաջանում: Դրա իմացությունը նշանակալից է: Ճիշտ է, հիանալի եւ ողջունելի փաստ է, որ վերջին տարիներին մեր երիտասարդների մեծ մասը շրջվել է եկեղեցու կողմը եւ միտվել եկեղեցում պսակադրության արարողության անցկացմանը, ինչը, մեր կարծիքով, ոչ միայն նշանակալից է, այլեւ անհրաժեշտ, քանզի է՛լ ավելի է բարձրացնում պատասխանատվության զգացումը, սակայն ընդգծում ենք, որ գործող օրենսդրությամբ, միայն պսակադրությունը, այսինքն միայն եկեղեցական կարգով ամուսնության ձեւակերպումը, իրավական նշանակություն չունի եւ, հետեւաբար, իրավական իրավասությունների չի հանգեցնում:

Ամուսնության համար անհրաժեշտ է, որ ամուսնացողները լինեն ամուսնության տարիքի եւ լինի նրանց համաձայնությունը: Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի 1108-րդ հոդվածի համաձայն, 1997 թվականի սեպտեմբերի 25-ից ամուսնական տարիքը, ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների համար, սահմանված է 19-ը: Բացառիկ դեպքերում՝ 16 տարեկանում, թույլատրվում է ամուսնությունը ծնողների կամ օրինական այլ ներկայացուցիչների նախօրոք, գրավոր համաձայնությամբ:

Ծնողների կամ օրինական այլ ներկայացուցիչների մերժման դեպքում, հարգելի պատճառների առկայության դեպքում, ամուսնացող անձանց դիմումի հիման վրա, ամուսնության իրավունք կարող է տալ դատարանը: Օրինակ, դատարանի կողմից նման հարգելի պատճառ է համարվում կնոջ հղիությունը կամ երեխայի ծնվելը: Նման դեպքերում, առկա ընտանեկան հարաբերությունների արագ կարգավորումը համապատասխանում է ինչպես պետության, այնպես էլ՝ երիտասարդ ընտանիքների շահերին:

Նշանադրությունը ամուսնանալու հարցում ամուսնացողների նախնական համաձայնությունն է: Գործող օրենսդրության համաձայն, նշանադրությունը ամուսնական պարտավորությունների ծագման չի հանգեցնում, ուստի այն չի կարող լինել դատարանում բռնի ամուսնության վերաբերյալ հայցի ներկայացման հիմք: Ապահարզանի դեպքում՝ նշանադրության հետ կապված նվերները կողմերը վերադարձնում են միմյանց: Դա հանդիսանում է Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի 1109-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Ամուսնությունը գրանցվում է հետեւյալ կերպ. ամուսնանալ ցանկացողները դիմում են ներկայացնում քաղաքացիական ռեեստրի գործակալության տարածքային ծառայությանը, որտեղ նշում են ամուսնության ամսաթիվը: Գործող օրենսդրության համաձայն, ամուսնությունը կարող է իրականացվել դիմումը ներկայացնելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ վերոնշյալը հնարավոր չէ իրականացնել բազմաթիվ դիմումների կապակցությամբ: Ամուսնանալ ցանկացողների դիմումը ուժի մեջ է այն ներկայացնելուց երկու ամսվա ընթացքում:

Այնպիսի բացառիկ հանգամանքների ժամանակ, ինչպիսիք են երեխայի ծնվելը, կողմերից մեկի կյանքին իրական վտանգի առկայությունը եւ այլ նման հանգամանքների դեպքում, ամուսնության գրանցումը անպայման պետք է ձեւակերպվի դիմումը ներկայացնելու օրվանից:

Ամուսնությունը գրանցելու մասին դիմումի մեջ կողմերը նշելու են, որ ամուսնությունն արգելակող հանգամանքներ գոյություն չունեն, որ ծանոթ են միմյանց ընտանեկան հանգամանքներին, դա նրանց համար որերորդ ամուսնությունն է, եւ ունեն արդյոք երեխաներ: Քաղաքացիական ռեեստրի գործակալության համապատասխան ծառայությունը՝ պարտավոր է կողմերին ծանոթացնել ամուսնության գրանցման կարգը եւ պայմանները, պարզաբանել ամուսինների եւ ծնողների իրավասությունները, նրանց զգուշացնել, որ պատասխանատու են ամուսնությունն արգելակող հանգամանքները թաքցնելու դեպքում: Այդ մարմինները պարտավոր են համոզվել, որ ամուսնությունն արգելակող հանգամանքներ գոյություն չունեն, որ կողմերը ծանոթ են միմյանց առողջական եւ ընտանեկան վիճակին:

Ամուսնության գրանցումը իրականացվում է հանդիսավոր պայմաններում՝ երկու (կամ ավելի) չափահաս վկաների ներկայությամբ: Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի 1116-րդ հոդվածի համաձայն, պահանջվում է, որ ամուսնացողներն ամուսնությունը գրանցելիս հայտարարեն, որ տեղյակ են միմյանց առողջական վիճակի մասին:

Վրաստանում օտարերկրացիների ամուսնության համար անհրաժեշտ է նրանց երկրների համապատասխան մարմնի տեղեկանքը, որ ամուսնությունն արգելակող հանգամանքներ գոյություն չունեն: Այս կարգը չի տարածվում քաղաքացիություն չունեցող անձանց վրա եւ այն երկրների քաղաքացիների վրա, որոնք նման տեղեկանք չեն ներկայացնում:

Ամուսնությունը գրանցելու հարցում պետական մարմնի հրաժարումը կարելի է բողոքարկել դատարանում:

Երկրորդ անգամ ամուսնանալու դեպքում, անձը պարտավոր է ամուսնությունը գրանցելիս՝ ներկայացնել նախորդ ամուսնության անվավերությունը հաստատող վկայականը: Եթե ամուսիններից մեկը վախճանվել է, մյուսը, նոր ամուսնությունը գրանցելիս, պարտավոր է ներկայացնել ամուսնու մահվան վկայականը:

Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի 1120-րդ հոդվածի համաձայն ամուսնությունը չի թույլատրվում.

ա) այն անձանց միջեւ, որոնցից թեկուզ մեկը ամուսնացած է այլ անձի հետ,

բ) անմիջական արյունակցական կապեր ունեցող անձանց միջեւ,

գ) կենսաբանական եւ ոչ կենսաբանական քույր-եղբայրների միջեւ,

դ) ծնողների եւ որդեգրվածների միջեւ,

ե) այն անձանց միջեւ, որոնցից թեկուզ մեկը, հոգեկան հիվանդության եւ թերզարգացման պատճառով, դատարանի կողմից անմեղսունակ է ճանաչվել:

Ինչպես տեսնում եք, Վրաստանի քաղաքացիական օրենսգիրքը չի արգելում ամուսնությունը մոտ ազգականների միջեւ (օրինակ, հորեղբոր, հորաքրոջ երեխաների միջեւ), սակայն, բարեբախտաբար, մեր հասարակությունում ամուսնության նման դեպքերը գործնականում բացառված են (ի տարբերություն Արեւմտյան Եվրոպայի, որտեղ նման ամուսնությունները բավականին հաճախակի են): Նաեւ, բարեբախտաբար, Վրաստանի քաղաքացիական օրենսդրությունն ընդհանրապես չի ճանաչում միեւնույն սեռի ներկայացուցիչների միջեւ ամուսնությունը:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

Ð²ð²´°ðàôÂÚàôÜ

ԴՈՒՔ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈ՞ՒՄ ԵՔ ՄԻՄՅԱՆՑ

Կարծես թե գտել եմ կյանքիս ուղեկցին, թեպետ որոշակի կասկածներ դեռ ունեմ: Գուցե ասեի՞ք, ինչ չափորոշիչներով կարելի է ընտրել կողակցին:

Գ.Փ.

Ախալքալաքի

Գոյություն ունեն մի քանի ցուցիչներ, որոնք կարող են օգնել ձեզ գտնելու այս հարցի պատասխանը:

- Դուք նստած եք կողք-կողքի կամ դեմ դիմաց եւ... լռում եք: Բայց ոչ թե այն պատճառով, որ ասելիք չկա, այլ որովհետեւ բառեր պետք չեն:

- Ձեր զրույցները կարող են լիովին անկեղծ լինել, եւ դուք կարող եք նրան այնպիսի բան ասել, որն ուրիշ ոչ մեկին չեք կարող ասել: Միեւնույն ժամանակ չեք կասկածում, որ նա լիովին ճիշտ կհասկանա:

- Իրարից անջատ օրն անցկացնելիս՝ դուք մտապահում եք այն ամենը, ինչը նրան հետաքրքիր կլինի կամ կուզեք նրա հետ քննարկել:

- Միայն այն մտքից, որ դուք պետք է միասին անցկացնեք ողջ կյանքը, դուք լցվում եք սիրով ու քնքշանքով:

- Ցանկացած առիթով ձեզ միշտ իրար հետ են հրավիրում եւ ձեզնից մեկին միայնակ հրավիրելու միտքը նույնիսկ անհեթեթ է թվում:

- Նրան զանգահարելուց առաջ դուք երբեք չեք մտածում՝ մի գուցե այս պահին հարմա՞ր չէ, գործից չե՞մ կտրի: Ձեր զանգը միշտ տեղին է: Հաճախ էլ այնպես է ստացվում, որ երբ պատրաստվում եք զանգահարել, նա ինքն է զանգահարում:

- Երբ նա ձեր կողքին չէ, դուք միշտ բջջային հեռախոսը ձեր կողքն եք պահում:

- Դուք ուզում եք ձեր տունն ունենալ, որտեղ նրան ջերմությամբ կշրջապատեք, նա էլ, իր հերթին, առիթը չի կորցնում, որ ուրախություն պարգեւի ձեզ:

- Դուք երկուսդ էլ ձեր ընկերներին ու հարազատներին ասում եք. «Հիմա մենք երկուսով ենք, մենք միասին ենք, եւ դուք ստիպված եք դրա հետ հաշվի նստել»:

ÐÆØÜ²ÊÜ¸Æð

ՄԻԱՅՆԱԿ ՄԱՅՐԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Անընդմեջ լարված վիճակում եմ: Գուցե դա պայմանավորված է նրանով, որ միայնակ մայր եմ: Չգիտեմ: Սակայն զգում եմ, որ այդ լարվածությունը հոգնեցնում է: Եթե կարող եք, օգնեք:

Վ.Տ.

Թբիլիսի

Միայնակ մայրերը պետք է ավելի հաճախ երեխաների համար հեքիաթներ ընթերցեն ու խաղան նրանց հետ: Դա կնպաստի կանանց մոտ սթրեսի նվազեցմանը: Ինչպես հաղորդում է Fox News-ը, նման խորհուրդ է տալիս Կանզասի համալսարանի հետազոտող Բլեյք Բերիհիլը: Նրա խոսքով՝ հատկապես միայնակ մոր կարգավիճակն է ծանր՝ կենցաղային խնդիրներ, աշխատանք եւ սահմանափակ հոգեբանական օգնություն: Բերիհիլը նման եզրակացության է եկել միայնակ 2 հազար 370 մայրերի հետ հարցում անցկացնելու արդյունքում: Նրանք բոլորն էլ հավաստիացրել են, որ երեխաների հետ զբաղվելով սթրեսից դուրս են գալիս:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

ՄԱՐՍԻՆ ՀԱՄԱՄՈԼՈՐԱԿԱՅԻՆ ՄԱՍՇՏԱԲԻ ԱՂԵՏ Է ՍՊԱՌՆՈՒՄ

2014 թվականի հոկտեմբերին Մարսի վրա կարող է տեղի ունենալ համամոլորակային մասշտաբի աղետ: Ռուսաստանի ISON-NM դիտարանի աստղագետների հայտարարության համաձայն՝ մոլորակի հետ կարող է բախվել C/2013 A1 գիսաստղը, որի միջուկի չափը կազմում է շուրջ 50 կիլոմետր:

Գիսաստղը շարժվում է Արեգակնային համակարգի մոլորակներին ընդառաջ: Ուստի Մարսի հետ դրա բախվելու արագությունը կլինի չափազանց բարձր՝ վայրկյանում մոտավորապես 56 կիլոմետր: Պայթյունի էներգիան կարող է հասնել 20 մլրդ մեգատոննայի, իսկ անկման վայրում կարող է գոյանալ 50 կիլոմետր տրամագծով խառնարան: Գիտնականները նշում են նաեւ, որ իրենց կանխատեսումները հիմնվում են ներկա պահին առկա տվյալների վրա, եւ դրանք կճշգրտվեն նոր տեղեկությունների ստացման համեմատ:

ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԴԵՂԱՀԱԲ՝ ՀՈԳՆԱԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Շվեյցարացի գիտնականները հորինել են դեղահաբ, որի շնորհիվ կարելի է ազատվել հոգնածությունից: Դեղահաբը ստեղծվել է հատուկ կանանց համար: Երկաթի ավելացումը կօգնի ոչ միայն անեմիայի դեպքում, այլեւ՝ հոգնածության, որն առկա է կանանց մեծամասնության մոտ: Ուսումասիրության հեղինակներից մեկի՝ Բերնարդ Ֆավրատի խոսքով՝ պարզվել է, որ իգական սեռի ներկայացուցիչների մոտ 3 ամիս շարունակ երկաթի ավելացումը կթեթեւացնի հոգնածությունը: Փորձին մասնակցել են 2 հարյուր կանայք, եւ ապացուցվել է դեղահաբի դրական ազդեցությունը: Կանայք իրենց ավելի լավ ու կենսուրախ էին զգում: Դեղահաբն, իհարկե, պետք է օգտագործել բժշկական խորհրդատվությունից հետո:

ԶԳԱՅՄՈՒՆՔ

ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ ՉԵՆ ՆՍԵՄԱՑՆՈՒՄ

Վերջերս աղջկա պես լաց եղա: Երեւի կյանքում առաջին անգամ, համենայնդեպս, չեմ հիշում, որ երբեւէ արցունք թափեի: Այդ օրը մի նորություն լսեցի, որը թեեւ ինձ հետ ոչ մի կապ չուներ, բայց սիրտս տակնուվրա արեց՝ ստիպելով փակվել աշխատասենյակում եւ լաց լինել: Հիմա ամաչում եմ իմ որպեսական թուլությունից: Կարծում եմ՝ արտասվելը բնորոշ է կնոջը, ոչ տղամարդուն: Ինչպե՞ս հաղթահարել ամոթի զգացումը եւ խուսափել եղածի կրկնությունից:

Ա.Ս.

Հոգեբանական վերլուծության համաձայն՝ լացն ունի երեք նպատակ.

1. Արցունքները լվանում են աչքերը, նրանցից հեռացնում են աղային եւ աղտային տարրերը, պահպանում են տարատեսակ վարակներից, հանում են լարվածությունը:

2. Ազատում են սթրեսից, թեթեւացնում են հոգեկան ու ֆիզիկական ցավի զգացումը:

3. Արցունքները էմոցիոնալ շանտաժի միջոց են ծառայում:

Անգլիացի բանաստեղծ Թոմաս Մուրը դիմելով իր սիրեցյալին, ով լալիս է երեխայական երազանքներից, ֆանտազիաներից եւ ցավերից, ասում է.

Արցունքներն այնքան սազում են քեզ,

Հաճախ արտասվիր, սիրելիս...

Արցունքներն աչքերին փայլ են տալիս, երբեմն ընդգծում են կնոջ կանացիությունը, թուլությունը, ցանկություն են առաջացնում նրան կարեկցելու, գուրգուրելու, գրկելու:

Ինչ վերաբերում է տղամարդու արցունքներին, ապա դրանց հանդեպ մինչեւ այսօր գործում է «ոչ հրապարակային» տաբու: Եթե տղամարդը չի կարողանում զսպել իրեն, թաքցնել իր ապրումները, ապա մեղավոր է զգում: Մանկությունից, ի թիվս այլ կարծրատիպերի, տղաներին ներշնչում են, որ իսկական տղամարդը պետք է լաց չլինի, որ լացը թուլացնում է, ժամանակ եւ էներգիա է խլում, որ արցունքներին ազատություն տալը նշանակում է ի ցույց դնել սեփական անօգնականությունը, իրավիճակը հսկելու անկարողությունը, բացեիբաց ներկայանալ իբրեւ թուլամորթ, անհաջողակ, ոչ թե, այսպես ասած, «սուպերմեն»: Բայց



հենց զգացմունքները չզսպելու, անթաքույց արտահայտելու ընդունակությունը էպիկական հերոսներին հմայք էր հաղորդում առասպելական կանանց մոտ եւ առասպելներ ընթերցող մերօրյա կանանց աչքերում: Քաջարի, անվախ եւ պատվախնդիր Աքիլլեսը վիրավորանքից մանկան պես լալիս է, ապա ողբում է ընկերոջ մահը, որից հետո միայն գնում է ջախջախելու թշնամուն: Արցունքները բնավ չեն նսեմացնում նրա կերպարը, այլ ավելի հասկանալի ու մտերիմ են դարձնում:

Առնական եւ տոկուն հին հույներն ամեն տարի գարնանային տոներին հավաքվում էին մարզադաշտերում՝ մասնակցելու ժամանակի թատերական փառատոնին, կիսելու դրամատիկ հերոսների ապրումները, ողբերգությունը, արտասվելու նրանց ճակատագրի վրա՝ այդպիսով հասնելու ոգեմաքրման:

«Աստվածային կատակերգության» քերթող Դանթե Ալիգերիին լալու առիթ է տալիս մերժված սերը, ապա սիրելիի վախճանը, բայց նա արիություն է ունենում իջնել դժոխքի հատակը, հաղթահարել ամենածանր փորձություններն ու սարսափները, իսկ հետո գրել այդ մասին: Դժոխքը վերջին շրջանակում կոմս Ուգոլինոն Դանթեին պատմում է սահմռկեցուցիչ պատմություն եւ ավելացնում. «Եթե անարցունք այս բոլորը լսեցիր, արդյոք դու երբեւէ արտասվե՞լ ես»:

Արտասվելու պատճառները շատ են եւ տարբեր՝ ցավալի եւ ուրախալի, հասկանալի եւ ոչ այնքան: Վերջին երկու տասնամյակում զգացմունքների արտահայտության գենդերային «բաժանումների» կարծրությունը գնալով տեղի է տալիս. կինոէկրանի սուպերմենը անցյալի գիրկն է անցնում, տղամարդիկ երբեմն իրենց թույլ են տալիս վերադառնալ Աքիլլեսի նախատիպին, թուլություն, զգացմունքայնություն դրսեւորել: Նման դրսեւորումները հուզիչ են, բայց չափի մեջ:

Հոգեբանական հարցումների համաձայն՝ մոտիկ, հարազատ մարդկանց տանջանքն ու մահը, սիրելիներից բաժանվելը եւ մեծ ուրախության զգացմունքներն են պատճառները, որոնք առանց երկմտանքի նշել են տղամարդիկ:

Չափավոր, հազվադեպ, հին հույների նման տարեկան ընդամենը 3 թատերատոնական օրերին հոգեթերապեւտիկ արցունքներ թափելով՝ Դուք ոչ թե ամոթ կզգաք, այլ՝ ոգեմաքրում:

Վերադառնալով Աքիլլեսին՝ Ձեզ թող օրինակ ծառայեն ոչ թե նրա արցունքները, այլ՝ սխրանքները:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Երբեմն մի պտղունց բարությամբ կարելի է չարության մի բլուր փլցնել:

ԹԱԹՈՒԼ ԱԼԹՈՒՆՅԱՆ
(1901-1973)
Հայ երաժշտական-հասարակական գործիչ, ԽՍՀՄ ժող. արտիստ

Որքան շո՞ւտ անցան ժամերը ջահել, ես ափսոսում եմ, որ աղջիկներին առաջվա նման չեմ կարող նայել:

ԻՈՍԵԲ ՆՈՆԵՇՎԻԼԻ
(1918-1980)
Վրաց բանաստեղծ

Իսկական խիզախ մարդը պետք է վարանի այն ժամանակ, երբ որեւէ բան է վճռում, պետք է ծանր ու թեթեւ անի բոլոր պատահականությունները, բայց կատարման ժամանակ անհրաժեշտ է լինել քաջարի:

ՀԵՐՈԴՈՏՈՍ
(մ.թ.ա. 485-425)
Հույն պատմիչ

Երբեք բարեկամություն մի արա այն մարդու հետ, որին դու չես կարող հարգել:

ՉԱՐԼԶ ԴԱՐՎԻՆ
(1809-1882)
Անգլիացի բնագետ

Սիրո եւ փառասիրության կրքերը ծնունդ են առնում, մարում տարիքից անկախ: Դրանք մարդու մեջ արթնանում են սկսած կյանքի առաջին տարիներից եւ հաճախ չեն լքում նրան մինչեւ գերեզման:



ԲԼԵԶ ՊԱՍԿԱԼ
(1623-1662)
Ֆրանսիացի գիտնական

Անհրաժեշտ է ինչ-որ ավելի մեծ բան, քան տաղանդը՝ ներկան հասկանալու համար, ինչ-որ ավելի մեծ բան, քան հանճարը՝ գալիքը կանխատեսելու համար, իսկ իմիջիայլոց ինչքան դյուրին է բացատրել անցյալը:

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²ÜºÎ¸àÎÜºð

** - Մայրիկ, կարելի՞ է խաղալ մեր բակի նոր «մանկական քաղաքում»:*

- Ոչ, տղա՛ս, չես հասցնի. հիմա այն կդիտի մեր մարզպետը, ապա կքանդեն ու կտանեն հարեւան քաղաք:

** - Ընդհանրապես հարկավոր է ընկերություն անել հարուստների հետ:*

- Ինչո՞ւ:

- Պարտք չեն տա, բայց նաեւ պարտք չեն խնդրի...

** - Հարգելի՛ ուղեւորներ: Մեր անձնակազմը ողջունում է ձեզ մեր ինքնաթիռի սրահում: Ձեր հարմարավետության եւ անվտանգության համար անձնակազմի հրամանատարը խմում է առաջին կենացը:*

** Ուրիշինը մեզ պետք չէ, բայց մերը մենք կվերցնենք, ումն էլ որ այն լինի:*

** Գիտնականները պարզել են, թե ինչ է ցանկանում կինը: Բայց նա արդեն մտքափոխվել է:*

** - Բժի՛շկ, այս ամիս ես նորից գիրացել եմ,- բողոքում է կինը դիետոլոգ բժշկին,- չնայած ես միշտ ոտքով եմ աշխատանքի գնում:*

- Ոտքով աշխատանքի գնալը,- ասում է դիետոլոգ բժիշկը,- քիչ է: Ձեզ ավելի շատ ֆիզիկական ծանրաբեռնվածություն է հարկավոր: Փորձեք որոշ ժամանակ երթեւեկել երթուղային ավտոբուսով պիկ ժամին:

** Առավոտյան կես ժամ ավել քնելու համար, բավական է նախօրեի երեկոյան լոգանք ընդունել, լվացվել, սափրվել եւ պառկել քնելու հագնված:*

** - Ես հարուստ տղամարդու չեմ փնտրում, ես փնտրում եմ այնպիսի տղամարդու, ով կհասկանա իմ հոգին:*

- Իսկ եթե ավելի կոնկրե՞տ:

- Ով կարտոֆիլ կկլպեր ու կլվանար ամանեղենը...

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՎԱՐՏՎԵՃԻՆ ԽՈՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Երկարաժամկետ հեռանկարում հայկական տնտեսությունը կարող է տարեկան ձեռք բերել լրացուցիչ 146 միլիոն եվրո եւ ՀՆԱ-ի 2,3 տոկոս աճ: 15,2 տոկոս աճ է կանխատեսվում Հայաստանից արտահանման մասով եւ 8,2 տոկոս աճ՝ ներմուծման, ինչը երկարաժամկետ հեռանկարում կբերի Հայաստանի առեւտրի հաշվեկշռի բարելավմանը: Իր հերթին, ԵՄ-ն ակնկալում է ձեռք բերել 74 մլն եվրո:

Ասոցիացիոն համաձայնագրի շուրջ բանակցությունները ԵՄ եւ Հայաստանի միջեւ սկսել են 2010 թվականից: Նպատակն էր՝ Գործընկերության եւ համագործակցության համաձայնագիրը փոխարինել նոր՝ խորացված հարաբերություններով: Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման շուրջ բանակցությունները սկսվել էին 2012-ի մայիսից: Բանակցային գործընթացի յոթ փուլերից հետո վերջնական պայմանավորվածություն է ձեռք բերվել 2013 թվականի հուլիսի 24-ին:

Այժմ Եվրոպական հանձնաժողովը Եվրամիության անդամ երկրներին կներկայացնի ՀԱԱՀ-ի տեքստը, որից հետո ԵՄ-ն ու Հայաստանը պաշտոնապես կնշեն ՀԱԱՀ-ի եւ Ասոցիացման համաձայնագրի բանակցությունների ավարտը:

ԵՄ-ն Հայաստանի խոշորագույն առեւտրային գործընկերն է, որը ներառում է երկրի առեւտրի 32 տոկոսը: 2012 թվականին ապրանքների երկկողմ առեւտուրը կազմել է 951 միլիոն եվրո:

ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՔՍԱՆԱՄՅԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Հուլիսի 19-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) նախագահ Սումա Չակրաբարտիի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը Սերժ Սարգսյանը բարձր է գնահատել ՎԶԵԲ-ի հետ Հայաստանի ավելի քան քսանամյա համագործակցությունը, որի ընթացքում Հայաստանի տնտեսության մի շարք ոլորտներում զգալի աշխատանքներ են իրականացվել:

Հանդիպմանն անդրադարձ է եղել Հայաստանի հետ ՎԶԵԲ-ի համագործակցության առաջիկա ծրագրերին, Հայաստանի առաջնահերթություններին, տնտեսության զարգացման ներուժին, ինչպես նաեւ առկա մարտահրավերներին եւ դրանց հաղթահարման հնարավորություններին:

Հանդիպման ավարտին ՎԶԵԲ նախագահը վերահաստատել է բանկի պատրաստակամությունը՝ շարունակելու աջակցությունը Հայաստանի համար առաջնահերթ ոլորտներում համագործակցության խորացմանը՝ ուղղված երկրի տնտեսության աճին, ենթակառուցվածքների եւ գործարար միջավայրի բարելավմանը, մասնավոր հատվածի կարողությունների ընդլայնմանն ու կարեւորագույն այլ խնդիրների լուծմանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԼՈՒՅՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանի նախագահ, «Լույս» հիմնադրամի համահիմնադիր Սերժ Սարգսյանը հուլիսի 19-ին նախագահական նստավայրում ընդունել է 2013-2014 թվականի կրթաթոշակառուներին:

Հանդիպմանը ներկա է գտնվել նաեւ Հայաստանի վարչապետ, «Լույս» հիմնադրամի համահիմնադիր Տիգրան Սարգսյանը: Ավանդույթի համաձայն՝ Հայաստանի նախագահը հավաստագրեր է շնորհել այս տարվա «Լույս»-ի կրթաթոշակառուներին: Հանդիպմանը մասնակցել են հիմնադրամի ներկայիս կրթաթոշակառուներն ու շրջանավարտները: 2009-2013 թվականների ընթացքում «Լույս»-ը ունեցել է 315 կրթաթոշակառու, 545 կրթաթոշակ է տրամադրել: Այս տարվա շրջանավարտները դեռ հաշվարկման փուլում են: Անցյալ տարվա 75 շրջանավարտներից 40-ն աշխատում են Հայաստանում, 25-ը շարունակում են այլ բուհերում սովորել եւ մյուս 10-ն աշխատում են աշխարհի հզորագույն ընկերություններում՝ Amazon, Google, Bloomberg, Twiitter,Microsoft:

Կրթաթոշակի շնորհման չափորոշիչներն անփոփոխ են. լինել ծագումով հայ կամ Հայաստանի քաղաքացի, ընդունված լինել «Լույսի» կայքում հրապարակած լավագույն 10 համալսարաններից մեկը, «Լույս»-ին դիմելու պահին լինել 18-40 տարեկան: Այս տարի կրթաթոշակի են արժանացել ամեն բուհից ոչ ավելի, քան 10 ուսանողներ, ովքեր առաջինն են դիմել ամբողջական փաթեթով:

ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՁԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը քաղաքապետարանի տրանսպորտի ոլորտի բոլոր պատասխանատուների մասնակցությամբ հրավիրել է խորհրդակցություն:

Մինչ համապատասխան հանձնաժողովի ստեղծումն ու սոցիալական որոշ խմբերի համար արտոնությունների տրամադրումը, քաղաքապետ Տարոն Մարգարյանը ոլորտի պատասխանատուներին հանձնարարել է կասեցնել ուղեւորափոխադրումների վարձը վերանայելու մասին Երեւանի քաղաքապետի որոշումը:

Որոշումը կայացվել էր հուլիսի 19-ին. ուղեվարձը ավտոբուսների եւ միկրոավտոբուսների դեպքում հուլիսի 20-ից դարձել էր 150, իսկ տրոլեյբուսների դեպքում՝ 100 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՃԵԼ Է

Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 10,3 տոկոսով (37,6 մլրդ դրամ) եւ կազմել 400,7 մլրդ դրամ: Հայաստանի Կենտրոնական բանկի տվյալներով՝ ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է տարվա զուտ շահույթով եւ կանոնադրական կապիտալի համալրմամբ:

«Տարվա ընթացքում 3 բանկ համալրել են կանոնադրական կապիտալը 10,2 մլրդ դրամ ընդհանուր գումարով, որից 9 մլրդ դրամը՝ արտաքին աղբյուրների հաշվին: Արդյունքում՝ բանկային համակարգի կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշիռը ավելացել է՝ կազմելով 73,1 տոկոս»,- նշված է ԿԲ տարեկան հաշվետվությունում: Կենտրոնական բանկի տվյալներով՝ կանոնադրական կապիտալում բանկային համակարգի մասնակիցները ամենամեծ տեսակարար կշիռ ունեն Եվրամիությունում (31,6 տոկոս), Ռուսաստանում (15,3 տոկոս) եւ Շվեյցարիայում (4,2 տոկոս):

Հայաստանում աճ է գրանցվել նաեւ միջազգային ծրագրերի շրջանակներում բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի առումով: 2012 թվականին դրանք ավելացել են 30,2 տոկոսով եւ կազմել մոտավորապես 445 մլրդ դրամ: Տրամադրված վարկերի գերակշիռ մասը (89,8 տոկոս) կազմում են վարկային պորտֆելի 1 տարի եւ ավելի ժամայնականությամբ վարկերը: Ծրագրերի վարկավորման հիմնական ուղղություններն են առեւտուրը, արդյունաբերությունը եւ գյուղատնտեսությունը:

Հայաստանում գործում է 21 առեւտրային եւ մեկ զարգացման բանկ: Բանկերի մասնաճյուղերի քանակը 2012 թվականին ավելացել է 32-ով եւ կազմել 474: Հայաստանում ավելացել է բանկային համակարգի աշխատակիցների քանակը՝ կազմելով մոտ 11 հազար մարդ:

ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԱՐԻ ՏՈՒՆ» ՆԱԽԱԳԾԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ

Սփյուռքի 155 երիտասարդ 15 երկրներից հյուրընկալվել են Հայաստանում «Արի տուն» ծրագրի չորրորդ փուլի շրջանակներում:

Այն բացեց Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Ծրագրի չորրորդ փուլի բացմանը ներկա էին նաեւ Հայաստանում գտնվող մի շարք սփյուռքահայ գրողներ:

Այս փուլի շրջանակներում Հայաստանը հյուրընկալել է մասնակիցներ Իրաքից, Սիրիայից, Ռուսաստանից, Վրաստանից, Լատվիայից, Սերբիայից, Բելոռուսից, Կիպրոսից, Նիդերլանդներից, Արգենտինայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից:

Ծրագիրն անցկացվում է հունիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում 8 փուլով, յուրաքանչյուրը երկու շաբաթ տեւողությամբ: «Արի տուն» ծրագրին կարող են մասնակցել 13-20 տարեկան սփյուռքահայ երիտասարդներ:

ԱՆՃԱԿԵՏ՝ «ՄԵԿ ԿԱՆԳԱՌ, ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» ՍԿԶԲՈՒՆՔՈՎ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը կարգադրություն է ստորագրել Հայաստանի պետական սահմանի անցման կետերում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրման մասին: Նախագահի հրամանագրով Հայաստանի կառավարությանը հանձնարարվել է մեկամսյա ժամկետում դիմել միջազգային մասնագիտացված կազմակերպություններին՝ Հայաստանի պետական սահմանի անցման կետերի ընթացակարգերի ներդաշնակեցման եւ օպտիմալացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար, ապա եռամսյա ժամկետում մշակել Հայաստանի պետական սահմանի անցման կետերում կիրառվող ընթացակարգերում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրման հայեցակարգի նախագիծը՝ Ազգային անվտանգության խորհրդի քննարկմանը ներկայացնելու նպատակով:

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԿԴԱԴԱՐԵՑՎԻ

ՀՀ ԱԱԾ քննչական վարչության վարույթում քննվող քրեական գործով մեղադրյալ՝ Վարդան Օսկանյանը նախաքննական մարմնին 19.07.2013թ. դիմում է ներկայացրել, ապա այդ կապակցությամբ ցուցմունք տվել՝ խոստովանելով, որ Ջոն Հանթսմանի կողմից Սիվիլիթաս Հիմնադրամին բացառապես բարեգործական նպատակներով օգտագործելու համար նվիրաբերված գումարից 250.795,26 ԱՄՆ դոլարն օգտագործել է անձնական նպատակներով՝ դա դիտարկելով, որպես գործարքի իր մասնաբաժին: Միաժամանակ նա պատրաստակամություն է հայտնել վճարել դրանից առաջացող, հարկային մարմնի կողմից հաշվարկված, հարկային պարտավորության գումարը:

Նկատի ունենալով, որ նա կամովին վերականգնել է հարկային պարտավորություններից առաջացած գումարը եւ տվել է իր համաձայնությունը՝ նախաքննության մարմինը որոշում է կայացրել Վարդան Օսկանյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

ԼՐԱՑՎՈՒՄ ԵՆ ԲՈՒՀԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԸ

Հայաստանի բուհեր ընդունելության լրացուցիչ մրցույթին մասնակցելու միջոցով 395 դիմորդներից 391-ն է ընդունվել:

Դիմորդներն ընդունվել են հանրապետության եւ մայրաքաղաքի 15 բուհերի 71 ֆակուլտետներ:

Հայաստանի պետական եւ ոչ պետական բուհերն այս տարի ունեցել են 12747 դիմորդ: ԵՊՀ-ն այս տարի առաջին փուլով ունեցել է 4050 դիմորդ, որից 3038-ն է ընդունվել: Երեւանի տնտեսագիտական համալսարան են դիմել 1882 դիմորդ. Մանկավարժական համալսարան՝ 1171, ԵՊՃՀ-ն՝ 1152, ԵՊԲՀ՝ 1092: Նախորդ տարիների համեմատ բուհերում ավելացել է թափուր տեղերի թիվը: Թափուր տեղեր չկային միայն Տնտեսագիտական համալսարանում եւ Բժշկական համալսարանում:

ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎԵԼ Է

Ապահովագրական պայմանագրերի քանակը Հայաստանում 2012 թվականի վերջին դրությամբ կազմել է 439 հազար, ինչը կրկնակի գերազանցում է նախորդ տարվա վերջին ցուցանիշը: Հայաստանի Կենտրոնական բանկի տվյալներով՝ ապահովագրության պայմանագրերով նախատեսված գումարները 2012 թվականի նույն ժամկետի դրությամբ կազմել են 6,3 տրիլիոն դրամ, ինչը նույնպես 2 անգամ ավելին է նախորդ տարվա ցուցանիշից:

Հայաստանում ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը 2012 թվականին կազմել է 35,5 մլրդ դրամ: Հայաստանում ապահովագրական գործունեություն են իրականացրել 9 ապահովագրական ընկերություններ: Ապահովագրավճարների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությանը:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՎՐԱՅԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՎՐԱՅԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում կայացավ բանաստեղծ, Վրաստանի վաստակավոր լրագրող Արսեն Երեմյանի «Կանչիր ինձ՝ ինչպես որդուդ» ժողովածուի շնորհանդեսը:

Միջոցառումը նախաձեռնել էին միջազգային կրթա-մշակութային միություն «Ռուսական ակումբը» (տնօրեն՝ Ռուսաստանի Դաշնության վաստակավոր գործիչ Նիկոլայ Սվենտիցկի) եւ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնը: Շնորհանդեսին ներկա էին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրթյանը, ակադեմիկոս Թենգիզ Ուչանեիշվիլին, պրոֆեսոր Գիզո Ուրուշաձեն, վրացական հանրային հեռուստատեսության վետերան Իգոր Նագորնին, գրականության, արվեստի եւ մշակույթի գործիչներ, ընթերցասեր հասարակայնության ներկայացուցիչներ:

Բանասեր, լրագրող, խմբագիր Արսեն Երեմյանը երկար տարիներ աշխատել է «Վեչերնի Տբիլիսի», «Զարյա Վոստոկա», «Գրուզիա-սպեկտր» թերթերի խմբագրություններում, ներկայումս «Ռուսկի կլուբ» հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալն է: Տարիների լրագրողական աշխատանքը չի խանգարել Արսեն Երեմյանին ստեղծագործելու գրականության տարբեր ժանրերում: Գրական նյութի փայլուն իմացությունը, մարդական աշխարհի հետ սերտ շփումը, լրագրողի հետաքրքիր կյանքը հարուստ նյութ է հանդիսացել նրա գրական գործերի համար: Երեմյանի գրքերը լույս են տեսել Թբիլիսիում եւ Մոսկվայում, վրացերեն եւ ռուսերեն: Դրանք են բանաստեղծությունների, պատմվածքների եւ ակնարկների մի քանի ժողովածուներ:

Բացելով միջոցառումը՝ շնորհանդեսի կազմակերպիչ, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության օտարալեզու ստեղծագործողների բաժնի պատասխանատու Արտեմ Գրիգորենցը (Կիրակոզով) տեղեկացրեց, որ օրերս Հայաստանի Ծաղկաձորում տեղի ունեցած օտարալեզու հայ գրողների հավաքին ինքը ներկայացրել է Արսեն Երեմյանի «Կանչիր ինձ՝ ինչպես որդուդ» ժողովածուն, քանզի վերջինս հիվանդության պատճառով չի կարողացել մեկնել Ծաղկաձոր: Ժողովածուն հրատարակվել է Թբիլիսիի «Ռուսկի կլուբ» միջազգային միության նախագծով, Վրաստանի գրողների եւ Հայաստանի գրողների միությունների աջակցությամբ եւ «Քարթու» միջազգային բարեգործական հիմնադրամի հովանավորությամբ:

Խոսելով ժողովածուում տեղ գտած մարդական կյանքին վերաբերող պատմվածքների մասին, հայտնի երաժշտագետ, Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Գուլբաթ Թորաձեի գնահատմամբ, ժողովածուն փաստորեն վրացական եւ ոչ միայն վրացական սպորտի տարեգրություն է, որտեղ զետեղված են 42 մարզիկի վերաբերող պատմվածքներ, որոնցից 8-ը օլիմպիական չեմպիոններ են:

Արսեն Երեմյանի՝ որպես ճանաչված լրագրողի, բազմաժանր ստեղծագործողի գործունեությունը բարձր գնահատեցին «Ռուսկի կլուբ» միության ներկայացուցիչ, նախկին «Գոլովինսկի» թերթի խմբագիր Վլադիմիր Գոլովինը, իր ժամանակին «Литературная Грузия» (Գրական Վրաստան) թերթի խմբագրի տեղակալ, գրականագետ Թամիլա Կորինթելին, Վան Բայբուրթյանը եւ ուրիշներ:

Երեկոյին գեղարվեստական երանգ հաղորդեցին Դավիթ Ամիրիանաշվիլու սան՝ Լեւան Լոնդարիձեի՝ իր մոր՝ Նաթիա Ասպանիձեի դուետի, դաշնակահարուհի Նատո Օքրոպիրիձեի, ջութակահարուհի Մարիաննա Կիրակոզովայի եւ դաշնակահարուհի Էթերի Ցքիֆուրիշվիլու կողմից դասական երգի եւ երաժշտության գեղեցիկ կատարումները:

ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔ

«ՍԵԼԵՆԱՍՏՐԱ»՝ ՄԻՔԱՅԵԼ ԱՆԱՆՈՎԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ընթացիկ տարվա հուլիսին թբիլիսյան «Դավիթ» հրատարակչության կողմից լույս ընծայվեց Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամ, ռուսալեզու գրականագետների «Արիոն» պուշկինյան ընկերության անդամ Միքայել Անանովի բանաստեղծական «Սելենաստրա» նոր ժողովածուն:

Ժողովածուում ներկայացված, վերջին 14 տարիներին գրված գործերը բազմաբնույթ են՝ ինչպես ժանրով, այնպես էլ թեմատիկայով: Դրանում տեղ են գտել սոնատներ, բանաստեղծություններ եւ բազադներ, երգեր, հուշագրություններ, թարգմանություններ անգլիական, հայկական, լեհական եւ վրացական գրականությունից, փիլիսոփայական-կրոնական սոնետներ, քնարերգական քառյակներ, ճանաչված ժամանակակիցների վերաբերյալ կատակ-շարժեր:

Բանաստեղծական գործերից բացի, ժողովածուում ներկայացված է հեղինակի հեքիաթի հիման վրա գրված մանկական պիեսը:

Ժողովածուի խմբագիրն է Միխայիլ Այդինովը, իսկ գրքի «Անուշիկի հանելուկները» մասը, որտեղ այբբենական կարգով ներկայացված են հանելուկներ կենդանիների մասին, խմբագրել է Մոսկվայի մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Օլեգ Ֆեդոտովը:

Վրաստանի խորհրդարանը խոր ցավակցություն է հայտնում Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանին, սիրելի մոր՝

Շողիկ Պարույրի ՄԿՈՅԱՆԻ

մահվան կապակցությամբ:

Վրաստանի խորհրդարանի «Անկուսակցական անկախ մեծամասնականներ» խմբակցությունը խորապես վշտակցում է խմբակցության անդամ, Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանին, սիրելի մոր՝

Շողիկ Պարույրի ՄԿՈՅԱՆԻ

մահվան առիթով:

Նինոծմինդայի եւ Ախալքալաքիի մունիցիպալիտետների սակրեբուլոն եւ վարչությունը խորապես ցավակցում են Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանին, սիրելի մոր՝

Շողիկ Պարույրի ՄԿՈՅԱՆԻ

մահվան կապակցությամբ:

«Վրաստան» թերթի խմբագրությունը խոր վշտով ցավակցում է Հենզել եւ Մարտուն Մկոյաններին, սիրելի մոր՝

Շողիկ Պարույրի ՄԿՈՅԱՆԻ

մահվան կապակցությամբ:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Արդյունաբերական ձեռնարկություն, գործարան: 8.Թբիլիսիի շրջաններից: 9.Ոխ, վրեժ, ոխակալություն: 10.Մետաղագործ: 13.Քառալար երաժշտական գործիք: 19.Վրացական «Մագթի» բջջային օպերատորի կանխավճարային քարտ: 20.Կանաչեղեն: 23.Հայաստանի բնիկ մրգերից: 24.Թանկարժեք քար: 29.Հաստ թել, որով կարում են տոպրակների բերանները: 31.Լեհաստանի դրամական միավորը սկսած 1924 թվականից: 34.Գետեզրի վրա կախվող «լացող» ծառ: 35.Հին հունական դիցարանում ռազմի աստվածը: 36.Երիզ (խսկց.): 39.Արքայի բազմոց: 41.Արու արծիվ: 43.Վարդազգիների ընտանիքին պատկանող հատապտուղ: 46.«... հասավ գառանը»: 48.Բնության երեւույթ: 49.ԱՄՆ-ի Տեխաս նահանգի վարչական միավորներից: 51.Շենքի առջեւում բաց տարածություն խաղալու եւ հանգստի համար: 52.Հայեցակետ, կարծիք, մոտեցում: 54.Բրիտանացի դերասան ... Բարոն Կոեն: 56.Լղար, վտիտ: 57.Վրացական բջջային կապ: 58.Փաղաքշական մասնիկ: 59.Գլխարկի տեսակ: 60.Վրաց մարզիկ, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ ... Կարտոզիա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ամոթ, պատվազգացում: 2.Հասկի փշոտ մազ: 3.Երկիր ներմուծվող կամ երկրից արտահանվող ապրանքների համար պետությանը վճարվող տուրք, հարկ: 4.Վտիտ, պայծառ: 5.Այս, ասիկա (բրբ.): 6.Երաժշտության ոճ: 11.Ասացվածք, առակ: 12.Հայ մանկագիր, ՀԽՍՀ վաստակավոր գրող Խնկո ...: 14.Հարցական դերանուն: 15.Հայկական այբուբենի տառ: 16.Այն (արեւմտ.): 17.Նիրհ, նինջ: 18.Անհայտ փոփոխական: 21.Ձայնի տոնայնություն, Օկտավա: 22.Գարնան ամիս: 25.Այծի «բալիկ»: 26.Արաբական այբուբենի 16-րդ տառը: 27.Հայ բեմի մեծանուն դերասանուհի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհի ... Ասրյան: 28.12 առաքյալներից, ով մատնեց Հիսուս Քրիստոսին՝ ... Իսկարիովտացի: 30.Հնագույն հեռահար զենք: 32.Չեխ նկարիչ եւ գրող Յոզեֆ ...: 33.Բարձր ջերմությամբ եւ դողով արտահայտվող հիվանդություն: 37.Հայ մեծահարուստ բարերար, ճարտարագետ, ՀՀ ազգային հերոս ... Մանուկյան: 38.Թռչյունների խումբ: 39.Չոր, ցամաք: 40.Արու ձի: 42.Հայ պետական, ռազմական եւ դաշնակցական գործիչ, քաղաքագետ-իմաստասեր Գարեգին ...: 44.Բելգիական-իտալական ծագումով երգչուհի ... Ֆաբիան: 45.Հանգստյան օր: 46.Ավան Վրաստանում: 47.Եթովպիայի մայրաքաղաքը Ադիս-...: 50.Նահանգ Մեծ Հայքում: 53.Դեղնագույն ապակենման նյութ, խեժ: 54.Սաղմոնների ընտանիքի ձուկ: 55.Ճյուղ, ուղեշ, ոստ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Կողով: 2.Շշուկ: 9.Տոկուն: 10.Անորոշ: 12.Անիկ: 14.Տաքսիստ: 18.Աքլոր: 21.Սնում: 23.Ամերիկա: 25.Մարս: 27.Ամլիկ: 30.Չնչին: 32.Ուռկան: 35.Մարո: 37.Սքողել: 38.Կերպաս: 39.Սպի: 40.Հուրի: 41.Ահարկու: 44.Իլիկ: 46.Այց: 48.Դդում: 49.Շղթա: 51.Ամիդա: 52.Կեչի: 54.Ծես: 55.Թլիկ: 58.Առու: 60.Արտ: 62.Ակտ: 63.Լոխում: 65.Նավ: 66.Արամիս: 67.Արա: 68.Ապի: 69.Կպչուն: 70.Կոշ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Որոշ: 3.Որոտ: 4.Կոմս: 5.Թուխս: 7.Շանել: 8.Մասիս: 11.Շաքար: 13.Կեր: 15.Իգրեկ: 16.Տականք: 17.Էմմի: 19.Քամ: 20.Ոգի: 22.Նան: 24.Մսուր: 26.Անմահ: 28.Լողորդ: 29.Կալիում: 30.Չուկչի: 31.Չարչի: 33.Ռոսիա: 34.Ասիացի: 36.Ասույթ: 42.Ադաթ: 43.Կուզիկ: 45.Կշիռ: 47.Յասաման: 50.Աձուխ: 52.Կորալ: 53.Չանախ: 56.Լավաշ: 57.Կտրիճ: 59.Ուլիկ: 61.Տնակ: 64.Ոսպ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge skype: VRASTAN-1920
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445